



## Պ Ա Ն Ծ Ա Լ Ի Ն Ա Թ Ն Ի Ք

Արևելքի հին ազգերի մէջ փոքր սոց կնք համարուել, բայց մեր մէջ չի եղել են մեծագործ անձեր, գաւազաբանների հերոսներ, անարիւն ու արիւնտա նահատակներ, որոնց իշատակն անմեռ, գործերն անմահ, ունչը սգեորիչ ու կենդանարար են ՚ղել ազգի համար դարէ դար:

Վարդապետ, ազատական զազափարների մարմնացնող, ուրուկների համար՝ ուրկանոցների հիմնադիր, ազգրանների համար ազգատանոցների շինարար ձեռք, որը ու այրիների համար՝ որբանոցների կազմակերպող, պանդուխտների և ճամբորդների համար վանքերի և օթևանների կառուցանող, հայ եկեղեցու ծիսականն ու քարոյախանը կազմակերպող և իրաւամբ Մեծ անունը ժառանգած յիւնտրոյ դարերից, զազափարի նահատակներից մեծագոյններից մինը: Եւ նա, որ իր հայրենիքին անմահութեան շունչ փչեց, անարժան թագաւորի ապերախտ ներշնչումով թունամահ եղաւ անարգ դաւադրի ձեռքով: «Տխուր զէպք մը, որուն ամօթը՝ դարուց հեռաւորութիւնը չէ կորցած փարատելն ասում է մի բանասէր: Սակայն իր «մարգարէներին կոտորող, առաքեալներին քարկոծող ազգ չար և վատը» անկարող եղաւ Մեծն Ներսէսի պանծալի անունն ու գործերը սպանել, որոնց շողերը ընկնում են դարերի և մեզ վրայ Գ-րդ դարու հեռաւորութիւնից:

Գլուխն է սա կրտսեր թարգմանիչների աստղաբոյլ խմբի: Աղէքսանդրիայի, Աթէնքի, Բիւզանդիոնի բարձրագոյն վարժարանների և դիւանների մեղուաջան ուսանողն ու գիտունը, Երբ Հայաստան վերադարձաւ, մեռել էին իր մեծ ուսուցիչները՝ Ս. Ս. Սահակ ու Մես-



Ներսէս Մեծ. Պարթևական սրբազնագոյն կանառի մէջ մի շողարևակ զէմբ, իր պապի՝ Մեծ Լուսաւորչի պէս հաւատով հօր, այլ աւակել հայրենաշունչ ու հայրենասէր: Ժամանակակից անարժան հայ թագաւորի արատաւոր գործերի արդար դատաւոր ու սաստիչ, պաւակուած նախարարների խրատիչ, երկիցս Հայոց թագաւորների խորաակուած գահը վերականգնող: Հայ ժողովրդի իսկական հայր ու անւնման հայրապետ: Բրիտանիական

Մովսէս Սորենացի. Ս. Սահակի և Ս. Մեսրոպի հոգուց ծնած, սրբաբեր բեկուած լուսազոյն աշակերտը, Հայոց ազգի անդրանիկ պատմութեան հայրն ու հեղինակը, հանճարեղ հիմնադիրը հայ ազգի ինքնաճանաչութեան, «Հայոց աշխարհի լոյսն ու փառքը», Հայ ազգի ցաւառ օրերի ազնկուտը ոգրերգակը անարժաններին դատող մըտրակը:



րոպ: Նրանց գերեզմանի վրայ ընկած սրտաբեկ հառաչանքով ողբաց հայ զոյգ լուսաւորների հանդէպը, «ամող զրկանացս, աւող թշուառական պատմութեանս. »  
Իր աննման ընկերների հետ հայալուծեցաւ աղէտ հողերականներից, «ստախոս արեղաներից», որոնց ձեռքից ազատուելու համար, ինչպէս աւանդութիւնն է ասում, անյայտութեան մասնեց իրեն, մութացկան դարձաւ խորը ծերութեան օրերում. ցերեկները մախաղն ու-



սին գեղեցիկ շքույն հաց ու ձկն էր մուրում, գիշերները լերան մի այրում ձկնի ճրագի լուսով բնայոց պատմութիւնն էր գրում:



Մակայն նախանձու ու քինախնդիր սուտ հոգեորականների հալածանքը շարատարեց Պորենացի Մովսէսին, որ ցայսօր Երզն գարու սակեղէն գրականութեան ծաղկափառ դաշտից ժպտում է ամէնի գիտակցող հայի:

Անանիա Երրակացի. Երզ գարը դարգարող մեծ գիտնական, երգակի թուազան (մաթեմատիկոս) ու աստեղագետը, ակամաւոր Տիրիկոս բնած վարդապետ արժանաւոր աշակերտը, որ իր հայրենիքում թուական գիտութիւնները տարածող մեծ ուսուցիչն եղաւ, որին իր արժանաւոր մեծ նախնեաց նման հալը դառն ապերախտութեամբ վարձատրեց Քէլէկա ու ոչ որ եղև շնորհակալ իմաց աշխատութեանս, ասում է նա, զի ոչ ՚իրեն հայրս իմաստ կամ գիտութիւն, այլ ՚ժողովն և ձանձրացողը:

Գրիգոր Նարեկացի. Ո՞վ չէ լսել այդ հոգեշունչ անունը, որ հայ գիւղացին է, որ Ժ-դ դարից ցայսօր ուխտի չի գնացել Նարեկացու ուխտատեղին, մով չի վառել «Ս. Նարեկի» այդ սքանչելի աղօթագրքի տոակ, արցունքներով ու յուսով չի կանչել Ս. Նարեկացի դու իմ մուրազը ասա:

Անձնացեաց Պարով եպիսկոպոսի որդին Գրիգորը ծնաւ 951 թուականին, Նարեկայ վանքի իմաստուն ասաջնորդ Անանիա վարդապետին աշակերտեցաւ: Այնտեղ իր վարքի որբութեամբ ու անարատքազաւարութեամբ նա մի մարմնաւոր հրեշտակ երևաց, իսկ իր գիտութիւնովն ու հանձարովը ժամանակի սեկնա-

յայանի հանձարներից մինը, ասում է քանասէրը:

Բացի իր հաշիւարձիկ «Նարեկից», որի մէջ փայլում է որպէս ինքնամոգիման, կրօնական մասձողութեան մեծ փիլիսոփայ, անօրինակ հոգեբան, սքանչելի քանաստեղծ, նա գրել է «Ապարանից խաչի պատմութիւնը», Աստուածածնի ներքոյը, «ճառի գովեստ Առաքելոց» ՚ի Սուրբ Յակոբն, «Երգերգոցի մեկնութիւնը» և այլն:

Գանի մեծ է հանձարը, այնքան հզօր տգէտների նախանձն ու աստեղութիւնը: «Նարեկացու հանձարն ու սրբութիւնը իրեն ղէմ հանեց ժամանակի տգէտ ու ինքնահաւան գլուխները, որոնք մինչև Անի գնացին Կաթուղիկոսին բողոքելու, Նարեկացուն ամբաստանելու, նրա միարանատէր ետանդը յանցանք համարելով»: Սակայն հանձարն ու աստեղութիւնը մարդկային շարու-



թեամբ չեն թմաւորում. ամօթապարտ չարերը միայն խղճահարութիւն շահեցան իրանց սե հոգիների համար:

Ներսէս Լամբրոնացի. Ազնուական արիւնից սերնդւած ու ազնիւ, լամբրոնի Սշին Իշխանի և Ներսէս Ենորհազու եղբոր աղջկայ՝ Բարեպաշտ Եհանգիտի որդին, այնքան գեղեցիկ ու վայելուչ մարմնով, նոյնչափ պերճ մտքով ու հոգով, որոնց շնորհիւ Բիւզանդիոնի կայսեր, Անտիոքի իշխանի ուշադրութիւնն էր գրաւել: Ուսաւ ժամանակի բարձրագոյն ուսումները, բայց իւր ձեռագը և աշխարհի փառքից երես դարձնելով Մկրտայ վանքը մասա, վանական դարձաւ, իր հանձարի ոյժովը 23 տարեկան հասակում Տարսնի եպիսկոպոսութեան աստիճան ստացաւ Մալով և Մկրտայ վանքի ասաջնորդ:


Իր կեանքը դրաւոր երկասիրու-

թեանց նուիրեց, որոնց քանակն ու որակը հիացմունք շարժեցին ժամանակի հայութեան և օտար գիտնաց մէջ: «Ատենարանութիւնը» «Պատարագի Մեկնութիւնը», Սուրբ գրքի բարձրագի մասերի «Մեկնութիւնները» «Ճառերը» «Երգերգական գրածքները», «Ս. Գրիգոր Նարեկացու վարքը» «Սեթն Պորհուրդների մեկնութիւնը» և այլն, ահա այն անխորատակելի յուշարձանները, որ Լամբրոնացին իր անմահութեան համար կանգնեցրաւ իր հանձարովը:

Նախանձի չար լեզուից ազաւ չմնաց և Լամբրոնացին: Նրա վրայ բողոքեցին թագաւորին, կամենալով զրկել տալ նրան պաշտօնից, լսեցնել նրա կայծակնացայտ լեզուն: Բայց այդ շնորհաւոս լեզուն ու Լամբրոնացու անմեղութիւնը կարողացան խախտել ժողայած քանասարկութիւնը և էլ աւելի աւելի դարձնել ստոր հոգիները:

Ահա այն պանծալի նախնիք, որոնց պատկերների շուրջը իրենց մեծ գործերից հիւսած պսակը դրի թոյլ ու հակիրճ խոսքերով: Որոնց մէջ Լուսաւորչի հաւատն է վառուել, Յիսուսի մարդասիրութիւնն է բորբոքել, Ս. Մանակի ու Մեսրոբի հայրենասիրութիւնն է հրդեհել ու ջերմութիւն տալի ցուրտ ապառութեամբ կարկամած հայութեանը:

Իցի՛ն թէ հայութիւնս եւսմ հայ եկեղեցին մեր բոլոր պանծալի նախնեաց պատկերները մտացութիւնից ու փոշիներից հանէր, նրանց շուրջը, նրանց մեծ գործերի նկարագրութիւնը գնէր ու հայ աշխարհի սեղանի վրայ դնէր, որ հայութիւնը գիտակցէր, տաքանար ու



ինքզինքը շարձամարտէր օտար մըթին զաղանաշատ անտանների նամփան բռնելով:

Բնիկ վարդապետ.

